

ՎԱՐԱԳ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

«ՇԱՐԱԿՆՈՑԻ» ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԿԱՆՈՆԸ

«Շարակնոց» ժողովածուի բոլոր հրատարակություններում, սկսած Ոսկան Երևանցու և Կարապետ Ադրիանացու 1664 թ. տպագրությունից, Թարգմանչաց կանոնն ունի «Կանոն Սրբոց Թարգմանչացն» խորագիրը: Տպագիր, ինչպես նաև գրեթե բոլոր ձեռագիր Շարակնոցներում, բացառությամբ հնագույն խմբագրությանը պատկանող երեք օրինակների, կանոնն ընդգրկում է վեց միավոր երգ:

Առաջին երկուսը օրհնություն են (առաջադիր ու ետադաս)՝

1. «Որք զարդարեցին տնօրինաբար...»,
2. «Որք թագաւորաց ազգաց եւ ազանց...» սկսվածքներով: Սրանց հաջորդում են.
3. «Սքանչելագործ Աստուած...» հարցը իր գործատնով,
4. «Որ ըզնորիս աստուածային...» ողորմյան,
5. «Անճառելի շնորհօք լըցեալ...» տեր հերկնիցը և
6. «Նըմանեալ Մովսէսի տէր վարդապետ...» մանկունքը¹:

Հարկ է նախապես նկատել, որ գրչագիր Շարակնոցներում կանոնը տալիս է խորագրային մի շարք տարբերակներ. «Կանոն Մեսրոբայ վարդապետի», «Շարական Սրբոյն Մեսրոբայ վարդապետի», «Կանոն Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպի», «Կանոն Սրբոց վարդապետացն», «Կանոն Սրբոց Թարգմանչացն»²:

Ինչպես մեծանուն հայագետ Հրայր Աճառյանն է վկայում, Սահակ վարդապետ Ամատունին սույն վերնագրերից հնագույնը համարում էր «Կանոն Մեսրոբայ վարդապետի» տարբերակը³: Սա հաստատվում է նաև այն փաստով, որ Շարակնոցի հնագույն խմբագրությանը պատկանող բոլոր երեք գրչագիր օրինակներում կանոնի խորագրերը, չհաշված չնչին տարբերությունները, արտահայտում են այդ նույն իմաստը⁴:

Միջնադարում կազմված մատենագիտական ցանկերից մեկը, որ բերում է Սարգիս Երեց գրիչը (մոտ XIII-XIV դդ.), Թարգմանչաց կանոնի հին շարականների համար (ի տարբերություն կանոնի նոր շարականների) հեղինակ է ճանաչում **Հովհաննես Սանդակունի** Կաթողիկոսին (478-490 թթ.). «...**զՎարդապետաց հինն** եւ զԱռաքե-

¹ Տե՛ս «Շարական հոգևոր երգոց սուրբ եւ ուղղափառ Եկեղեցոյս Հայաստանեայց», ի Ս. Էջմիածին, 1861, էջ 524-528:

² Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. ձեռ. No 9838, էջ 99բ; No 2478, էջ 213բ; No 1576, էջ 264բ; No 3402, էջ 227ա; No 7514, էջ 199ա; No 1599, էջ 219ա; No 2092, էջ 191բ; No 1620, էջ 274բ; No 9741, էջ 187ա, նաև «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հատ. հինգերորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1971, էջ 326, 488, 489 ; «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հատ. Դ, յօրինեց Խ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1993, էջ 25:

³ **Հրայր Աճառյան**, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 295:

⁴ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. No 9838, էջ 99բ; «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հատ. հինգերորդ, էջ 488; «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հատ. Դ, էջ 347:

լոց հինն մինչև Մեղաք յամենայնին Յոհան Մանդակունեցին ասաց...»⁵: Ինչպես նկատել է երախտաշատ Սահակ վարդապետը, Սարգիս Երեցը հին ու նոր շարականները միմյանցից տարբերակել է մի յուրահատուկ սկզբունքով՝ հները՝ կրճատագիր, իսկ նորերը՝ տառ առ տառ արձանագրելու սկզբունքով: Նա հին է կոչում V-XI դարերում ստեղծվածները (կրճատ գրվածները), նոր՝ XII-XIII դարերում հորինվածները (բառ առ բառ արձանագրվածները)⁶: Եվ նրա Շարակնոցում Թարգմանչաց կանոնի վերը թվարկած երգերից միայն առաջին երկու օրհնություններն են ներկայացված լրիվ գրությամբ⁷, այսինքն «Որք զարդարեցին տնօրինաբար...» և «Որք թագաւորաց ազգաց եւ ազանց...» օրհնությունները դիտվում են նոր շարականներ, մնացածները՝ հին:

Իսկ ըստ Գրիգոր Տաթևացու խմբագրած ցուցակի՝ «...զԹարգմանչաց օրհնութիւնն... [ասաց] Վարդան վարդապետն»⁸: Սույն միտքը փոքր-ինչ տարբեր ձևակերպումներով հաստատում են նաև այլ աղբյուրներ⁹: Նշանակում է, ըստ մատենագիտական հին ցանկերի, Թարգմանչաց կանոնի առաջին երկու միավորները՝ օրհնությունները, հորինել է Վարդան վարդապետ Արևելցին, իսկ մնացած չորսը՝ Հովհաննես Մանդակունի Կաթողիկոսը¹⁰:

Առաջնորդվելով այս տեղեկություններով՝ թվում է, թե կանոնի կազմում ընդգրկված շարականների հեղինակային պատկանելությունը մատնանշելիս պետք է որ հնարավոր լինե՞ր խուսափել անհարկի շփոթություններից: Մինչդեռ որոշ հետազոտողներ, այնուամենայնիվ, անզուշաբար թույլ են տվել որոշ վրիպումներ:

Օրինակ՝ շարականի ժանրի քննությանը նվիրված իր ծավալուն մենագրության մեջ հանգուցյալ գրականագետ Գր. Հակոբյանը, չգիտես ինչ փաստերի հիման վրա, «Որք զարդարեցին...» և «Որք թագաւորաց...» օրհնությունների հետ Հովհաննես Մանդակունուն է վերագրում նաև Թարգմանչաց կանոնից դուրս մնացած «Յնծացէք այսօր...» սկսվածքով պարականոն ճաշուն¹¹:

Առաջին երկուսը, ինչպես նշել ենք, ըստ հին տեղեկությունների՝ Վարդան վարդապետ Արևելցու ստեղծագործություններն են:

Բացի այդ՝ հիշված երեք շարականների պատկանելությունը Հովհաննես Մանդակունուն բացառվում է նաև այն հանգամանքով, որ Սարգիս Երեցի արտագրած

⁵ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. No 2092, էջ 224բ:

⁶ «Հին ու նոր պարականոն կամ անվաւեր շարականներ», լոյս ընծայեաց Սահակ վարդապետ Ամատունի, միաբան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1911, էջ Դ:

⁷ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. No 2092, էջ 191բ-192բ:

⁸ Տե՛ս **Հ. Անասյան**, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., հատ. Ա, Երևան, 1959, էջ LXV:

⁹ Մանրամասն քննությունը տե՛ս **Փ. Փ. Անթապյան**, Վարդան Արևելցի, գիրք Ա, Երևան, 1987, էջ 193-199:

¹⁰ Ըստ այլ տեղեկությունների՝ մի շարք կանոնների, այդ թվում նաև «Վարդապետաց» կանոնի մասին հայտնվում է, թե «զայս ամենայն ոմանք Անանիայի տան եւ ոմանք Խորենացոյն» (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. No 3402, սկզբի չհամարակալված թերթի առաջին երեսը; **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 637-639): Բայց այս հաղորդումը պարունակող տարբեր աղբյուրներ՝ Տաթևացու «Գիրք հարցմանցի» ձեռագրերից շատերը, հենց նրա կենդանության օրոք՝ 1401 և 1407 թթ. Տաթևում ընդօրինակված ձեռագրերը, նաև տպագիր Շարակնոցներից շատերի առաջաբանները **Վարդապետաց** ընթերցվածի փոխարեն ունեն **Վարդանանց** տարբերակը (տե՛ս **Հ. Անասյան**, նշված աշխատությունը, էջ LXVII; «Շարական հոգեւոր երգոց...», էջ Ա, կետ Դ): Սույն հանգամանքն այնուամենայնիվ հուշում է որոշ վերապահությամբ ընդունել կանոնի հին շարականների նկատմամբ Հովհան Մանդակունու հեղինակության վարկածը:

¹¹ **Գ. Ա. Հակոբյան**, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), էջ 96:

ձեռագրում դրանք ներկայացվում են, այսպես կոչված, բաց գրությամբ, որը նոր ստեղծված գործեր լինելու ընկալման արտահայտություն է: Ինքը՝ գրականագետը նույնպես տեղյակ և համամիտ է Սահակ վարդապետ Ամատունու այն դիտարկմանը, թե Սարգիս Երեցը հին է համարում V-XI դարերում հորինված շարականները և դրանք ժողովածուի մեջ զետեղում է կրճատ գրությամբ, բառերն ու նախադասությունները՝ հապավված, մինչդեռ XII-XIII դարերում գրվածները կոչում է նոր՝ արտագրելով բաց, յուրաքանչյուր հնչյունը ընթեռնելի գրությամբ¹²: Ավելին՝ ուսումնասիրողը Հովհաննես Մանդակունուն հատկացրած բաժնում, լիովին անտեսելով իսկապես նրան ավանդաբար վերագրվող «Որ ըզնորհս աստուածային...» սկզվածքով ողորմյան, մանրամասնորեն կանգ է առնում հիշյալ օրհնությունների վրա, դատողություններ, որոնք գրեթե նույնությամբ վերարտադրվում են Վարդան վարդապետ Արևելցուն հատկացված բաժնում¹³:

Կա նաև հակառակ բնույթի մոտեցման փաստ, երբ Վարդան վարդապետին են ընծայվել կանոնի՝ Մանդակունուն վերագրված «Անճառելի շնորհօք լըցեալ» և «Նըմանեալ Մովսեսի» շարականները¹⁴ փորձ անելով նաև տեսականորեն հիմնավորելու ամբողջ կանոնը նրան հատկացնելու վարկածը. «Սույն ժողովածուում,- գրել է «Գանձարան հայ հին բանաստեղծության» արժեքավոր հրատարակության աշխատասիրողը,- Վարդան Արևելցու անունով բերվող չորս շարականներից միայն առաջինն է, որ շարականագիրների մասին միջնադարյան ցանկերում նշվում է որպես նրա ստեղծագործություն: Դա «Որք զարդարեցին...» օրհնությունն է, որով Շարակնոցում սկսվում է Սրբոց Թարգմանչաց կանոնը: Հենց այդ հանգամանքն էլ թերևս ավելորդ է դարձրել մեկ առ մեկ մատնացույց անելու կանոնի նաև հաջորդ երգերն իբրև նրա գրչի արդյունք: Շարականային այդ ամբողջ կանոնը մտահղացված է որպես մեկ ամբողջություն: Միմյանց հետ նրա բոլոր միավորների հարազատությունը իրավացիորեն հիմք է տվել ընդունելու, որ նրանց բոլորի հեղինակը նույն Վարդան Արևելցին է»¹⁵:

Պարզ չէ, թե ինչպես է արտահայտվել կանոնի «բոլոր միավորների հարազատությունը», կամ ո՞ւմ է այդ հարազատությունը հիմք տվել ընդունելու, որ դրանք բոլորը հեղինակել է նույն անձը: Այս վարկածը, ցավոք, մնում է սոսկ հայտարարություն՝ հակադրվելով թե՛ գրչագրական և թե՛ ոճական ու բովանդակային տվյալներին:

Թերևս հիշյալ տեսակետի դրսևորման փաստը պետք է բացատրել Սահակ վարդապետ Ամատունու չհիմնավորված մի հայտարարության նկատմամբ աշխատասիրողի ցուցաբերած անհիմն վստահությամբ: Իր «Հին ու նոր պարականոն կամ անվաւեր շարականներ» գրքում Սահակ վարդապետ Ամատունին գրել է, թե Գ. Ավետիքյանը Վարդան Արևելցուն է ընծայում նաև Թարգմանչաց կանոնի «Սքանչելագործ Աստուած...» հարցը, «Որ զշնորհս...» ողորմյան, «Անճառելի շնորհօք...» տերիերկնիցը և «Նըմանեալ Մովսեսի...» մանկունքը¹⁶:

Բայց իրականում հայր Գաբրիել Ավետիքյանը շարականին նվիրված իր ուսումնասիրության մեջ, իբրև սեփական տեսակետի արտահայտություն, այդպիսի միտք

¹² Նույն տեղում, էջ 41:

¹³ Նույն տեղում, էջ 267-269:

¹⁴ «Գանձարան հայ հին բանաստեղծության», աշխատասիրությամբ Պողոս Խաչատրյանի, Երևան, 2000, էջ 311-313:

¹⁵ Նույն տեղում, էջ 903:

¹⁶ «Հին ու նոր պարականոն կամ անվաւեր շարականներ», էջ 138:

չի հայտնել: Նա պարզապես կանոնի շարականների իմաստն ու բովանդակությունը բացատրելուց առաջ սոսկ մատնանշել է ավանդաբար պահպանված այն տեղեկությունը, թե «Զարական Սրբոց Թարգմանչաց Սահակայ եւ Մեսրոպայ, եւ աշակերտաց նոցա, **ասեն** արարեալ Մեծին Վարդանայ վարդապետի»¹⁷:

Սահակ վարդապետն, ըստ էության, անհարկի կերպով բացարձակացրել է Գաբրիել Ավետիքյանի վկայակոչած հնօրյա ենթադրությունը՝ «**ասեն**»:

Անհերքելի իրողություն է, որ Հովհաննես Մանդակունուն վերագրվող բոլոր չորս շարականները ներկայացնում են Թարգմանչաց կանոնի առավել հին կազմը: Սույն կարծիքը հաստատվում է հետևյալ փաստերով.

ա. Ինչպես արդեն ասվել է, Սարգիս Երեցի արտագրած Շարակնոցում Հովհաննես Մանդակունուն վերագրվող չորս շարականները, ի տարբերություն «Որք զարդարեցին...» և «Որք թագաւորաց...» երկու օրհնությունների, բերված են կրճատ գրությամբ, ինչը նշանակում է, որ դրանք հին հորինվածքներ են¹⁸:

բ. Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 9838, ինչպես նաև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի թիվ 1654 և Վենետիկի Մխիթարյան միաբանության թիվ 97 ձեռագրերը, որոնք ներկայացնում են Շարակնոցի հնագույն, այսպես կոչված, նախախլիկյան խմբագրությունը, չունեն Վարդան վարդապետ Արևելցուն վերագրվող «Որք զարդարեցին...» և «Որք թագաւորաց...» սկսվածքներով օրհնությունները, բայց նրանցում առկա են Հովհաննես Մանդակունու անունով վերը նշված չորս շարականները՝ հարցից մինչև մանկունքը ներառյալ¹⁹: Սա միանգամայն բնական և հասկանալի է մանավանդ երևանյան ձեռագրի պարագային, որը գրվել է 1193 թվականին, այսինքն՝ Վարդան Արևելցու ծնունդից մի քանի տարի ավելի վաղ: Հիշարժան է այն փաստը, որ Վարդան Արևելցու «Որք զարդարեցին...» և «Որք թագաւորաց...» օրհնությունները սույն ձեռագրի կազմում ընդգրկվել են ավելի քան 300 տարի հետո՝ 1526 թվականին, երբ Շարակնոցը նոր ժամանակների պահանջներով օգտագործելու համար գրիչ Կարապետ երեցը կանոնի պակասը լրացրել է հավելադիր թղթերից մեկում՝ «Արհնութիւն Թարգմանչացն» խորագրի տակ²⁰:

գ. Նկատի ունենալով Թարգմանչաց կանոնի խորագրերից ամենաարխայիկ՝ «Կանոն Մեսրոբայ վարդապետի» տարբերակի բնույթը, պետք է ընդունել, որ այդ կանոնը նախապես ստեղծվել է լոկ Մեսրոպ Մաշտոցի անձն ու վաստակը պանծացնելու պահանջով: Այս է պատճառը, որ կանոնի՝ Հովհաննես Մանդակունուն վերագրվող բոլոր չորս շարականներում բացարձակապես հիշատակվում ու մեծարվում է մի որոշակի անձնավորություն, որը երգերի հյուսվածքում անվանվում է «երանելի վարդապետ», «տէր վարդապետ» կամ «սուրբ վարդապետ».

Որ ի ձեռնն **երանելի վարդապետին**

Արարեր ողորմութիւն ազգի մարդկան,

¹⁷ «Բացատրութիւն շարականաց որք պաշտին ի հասարակաց ժամակարգութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ», աշխատասիրեալ հ. Գաբրիէլի Աւետիքեան Կոստանդնուպօլսեցւոյ Աթոռակալ Վարդապետի ի Մխիթարեան միաբանութենէ, 1814=ռմկդ ի Վենետիկ ի վանս Ղազարու, էջ 548:

¹⁸ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. No 2092, էջ 191բ-193ա:

¹⁹ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. No 9838, էջ 99բ-100ա: «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատ. հինգերորդ, էջ 488: «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց», հատ. Դ, էջ 347-348:

²⁰ Տե՛ս Կարապետ երեցի թողած հիշատակարանը (ձեռ. թիվ 9838, էջ 247ա) և լրացված օրհնությունները (էջ 141ա-141բ):

Օրհնենք ըզքեզ, տէ՛ր Աստուած հարցն մերոց ²¹։

Կամ՝

Որ զշնորհ աստուածային
Առ ի վերուստ իջեալ յերկնից,
Պարգեւեցեր հիւսիսականացս
Ի ձեռն **սուրբ վարդապետին**,
Աղաչանօք սորա ողորմեա մեզ, Աստուա՛ծ²² ։

Ինքնին հասկանալի է, որ «երանելի վարդապետ» կամ «տէր վարդապետ» շրջատությունները այստեղ հատկապես վերաբերում են Մեսրոպ Մաշտոց վարդապետին։ Հիշարժան է նաև այն, որ «Նըմանեալ Մովսեսի...» սկսվածքով մանկունքում հայությունը և Հայաստան աշխարհը «օրինաց գրով» լուսավորելու մեծագործությամբ «տէր վարդապետ»-ը համեմատվում է հրեից Մովսես մարգարեի հետ։

Նըմանեալ Մովսեսի **տէր վարդապետ**՝
Բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ,
Որով լուսաւորեցան ազգ որդւոց Թորգոմայ ²³ ։

Ի տարբերություն սույն ընկալման՝ կանոնի «Որք զարդարեցին...» և «Որք թագաւորաց...» սկսվածքներով օրհնություններում դրվատվում է ոչ թե մի որոշակի անհատ՝ «տէր վարդապետ» կամ պարզապես թարգմանիչ, այլ հոգնակիորեն՝ թարգմանիչներ։ Այս հանգամանքն իր ժամանակին նկատել և արձանագրել է հայր Գաբրիել Ավետիքյանը։ «Յօրհնութեանն հասարակաբար զՍրբոց Թարգմանչացն խօսի բազմաւորակի,- նշել է նա,- իսկ ի հարցն եւ յայլս, որ զկնի, առ Սուրբն Մեսրոպայ՝ եզականաբար»²⁴։

Այսպիսով, պետք է միանգամայն ընդունելի համարել այն տեսակետը, թե «Որք զարդարեցին...» և «Որք թագաւորաց...» սկսվածքներով օրհնությունները հորինվել են Վարդան վարդապետ Արևելցու կողմից և «Կանոն Մեսրոբայ վարդապետի» խորագիրը կրող շարականների կազմում ներմուծվել են ամենավաղը XIII դարի վերջին տասնամյակներին։ Այս համալրման պահանջով ու հետևանքով կանոնը ընդունել է զանազան վերնագրեր, իսկ ապա, ժամանակի ընթացքում կայունանալով, վերջնականապես ստացել է «Կանոն Սրբոց Թարգմանչացն» խորագիրը, որը և անցել է տպագրին։

Խորագրի փոփոխության սույն ընթացքը պետք է համարել տոնելի անունների բազմացման և «թարգմանիչ» հասկացության ծավալի հետագա ընդարձակման իրողության հետևանք։ XIII դարում արդեն թարգմանիչ ասելով ենթադրվում էր ոչ միայն Մեսրոպ Մաշտոցը (կամ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը)։ Ավելի գործածական էր բառի հոգնակի ձևը՝ «թարգմանիչք», որովհետև Թարգմանչաց տոնին հիշելի և մեծարելի անուններ էին նաև Եղիշեն, Մովսես Քերթոզը, Դավիթ Անհաղթը, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին։

Եվ պատահական չէ, որ Վարդան Արևելցու օրհնություններում տոնելի անձինք

²¹ «Շարական հոգեւոր երգոց», էջ 526։

²² Նույն տեղում, էջ 526-527։

²³ Նույն տեղում, էջ 527-528։

²⁴ «Բացատրություն շարականաց...», աշխատասիրեալ հ. Գաբրիելի Աւետիքեան, էջ 548։

գերազանցապես հիշվում են միայն հոգնակի թվով՝ «**Որք** զարդարեցին...», «**Որք**... գերագոյն ցուցին...»: Ու թեպետ ակնարկները, կարծես, դարձյալ վերաբերում են Մեսրոպ Մաշտոցին ու Սահակ Պարթևին, այնուամենայնիվ կտրականապես չեն օտարվում նաև վերը հիշված սուրբ անունները.

Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին՝
Հաստատելով յերկրի ըզգիր կենդանի՝
Հովուել ըզհօտ նոր Իսրայելի...²⁵:

Որք զծածկեալ խորհուրդ աստուածգիտութեան
Տնօրինաբար յայտնեալ ծանուցին
Հանգոյն սրբոյ մեծին Մովսեսի
Անմատոյց լուսոյն երկըրպագեսցուք²⁶:

Թերևս ավելորդ չէ նաև նկատել, որ Սարգիս Երեցի Շարակնոցում Թարգմանչաց կանոնն ունի ևս երեք հավելյալ շարականներ²⁷: Մեկը, որ մի հին հետևակ օրհնություն է՝ «Զառաջնորդս և զվարդապետս Եկեղեցւոյ Քում սրբոց» սկսվածքով, առնված է «Համօրէն առաքելոցն Քրիստոսի» կանոնից²⁸: Մյուսը՝ «Յընծացէ՛ք այսօր, ազգ եւ ազի՛նք» պարականոնն է²⁹, իսկ երրորդը՝ «Սրբոց Հայրապետաց» կանոնի «Այսօր երկնայնոցն ընդ մեզ...» դձ ճաշուն³⁰:

²⁵ Նույն տեղում, էջ 524:

²⁶ Նույն տեղում, էջ 525:

²⁷ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. No 2092, էջ 192բ:

²⁸ «Շարական հոգևոր երգոց», էջ 97:

²⁹ Տե՛ս «Հին ու նոր պարականոն կամ անվաւեր շարականներ», էջ 139:

³⁰ Շարական հոգևոր երգոցն, էջ 544: